



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

408

Դ-մամսունը  
Կրօցի

Բ Ա.

IX տպագր

2(075)  
Օ-15

թ. 1902

1902 N° 659

*β. such*

# ԴԱՍՏԵՏՐ ԿՐՈՆԻ

БИБЛИОТЕКА  
ИНСТИТУТА  
ПО ПОДГОТОВКЕ  
СОСТАВА Наук  
С СР

“ԱՅ. ուստաւ Սիր որդուց ձերոց  
խօսել զսոսա ի նստել ի տան,  
եւ ի գնալ ի ճանապարհի եւ  
ի ննջել եւ ի բառնելու”  
Վ. Մայմ, ժա. 19.

Համաձայն ծրագրի հոգեւոր իշխանութեան

## IX տպագրութիւն

11 wq fbg

ՍԱՀԱԿ քՅ. ՍԱՀԱԿԵՄՆՅ

(Միաբան Մողնութ 0. Գէսրգ եկեղեցու)



• 2001

• १३१ •

Տաղարան S. W. Powers, Jr.

2(075)

U-15

2010

Հ արմ-կ  
2826

2(075)

Ս-15

Բ. ՏԱՐԻՒ  
(5)

# ԳԱՍՏԵՏՐ ԿՐՈՆԻ



Ձեւ ուսուածիք որդւոց ձերոց  
խօսել զոտոս ի նստել ի տան.  
Եւ ի դնալ ի ձանապարհի եւ  
ի ննջել եւ ի լառնելու:  
Վ. Մոլո. Ժա. 19.


Համաձայն ծրագրի հոգեւոր իշխանութեան

IX տպագրութիւն

Կազմեց

ՍԱՅԱԿ ՔՅ. ՍԱՅԱԿԵԱՆՑ

(Միաբան Մողնուով Ս. Գէորգ Եկեղեցւոյ)



Թ. Ի. Ֆ. Լ. Ա.

Տպարան Տ. Մ. Ռուբինեանցի

1902

## ԳՐՈՒԹ ՂՋԱՑՄԱՆ



Дозв. цензурою. Тифлисъ, 23-го Марта 1902 г.



36114-66

ՀՐԱՄԱՆԱՀ

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց,  
Ժայռագոյն Պատրիարքի Համազգական Նա-  
խամենաքար Արքարատեան Առաքելական Մայր  
Աթոռոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի:

698-U.L.

առան մասով հայութիք ովքուն ոց  
արմատ անձի ուրաք ուղարքը ուշ մասուն  
մոյելուր ու նկատ առա մասելու Ա  
յանակն մասուն մասուն մասուն մասուն

97. Ա. (1).

### ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ղազարոս անունով մի հիւանդ կար՝  
Բեթանիա գիւղում։ Նրա երկու քոյքերը՝  
Մարիամը և Մարթան՝ մարդ ուղարկե-  
ցին Գալիլիա՝ Յիսուսի մօտ ասելու, որ  
քո սիրելի Ղազարոսը հիւանդ է։ Յիսուս,  
երբ այս բանը լսեց, ասաւ. «Եյն հիւան-  
դութիւնը մեռնելու համար չէ»։ Բայց մինչեւ  
մարդիկը լուր կրերէին, Ղազարոսը մեռաւ։  
Յիսուսն երբ լսեց, թէ Ղազարոսը հի-  
ւանդ է, ասաւ իւր աշակերտներին. «Եկէք  
զնանք Հրէատան, մեր բարեկամ՝ Ղազա-  
րոսը հիւանդ է»։ Յիսուսն երբ եկաւ Բե-  
թանիա, արդէն շորս օր էր՝ որ թաղկլ էին  
խեղճին։ Ազգականներից շատերն եկել էին  
Մարիամի և Մարթայի մօտ՝ որ միսիթարեն  
նրանց։ Երբ Մարթան լսեց, թէ Յիսուս  
գալիս է, գնաց նրա առաջ, իսկ Մարիամը  
տանը մնաց, Մարթան, երբ տեսաւ Յիսուսին,  
ասաց, «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ  
եղբայրը չէր մեռնի, բայց ես հաւատացած  
եմ, որ հիմա էլ ինչ որ Ասպծուց խնդրես,

քո խօսքերը կկատարի»: Յիսուսն ասաւ նրան. «Քո եղբայրը յարութիւն կառնի»: Մարթան ասաւ. «Քիտեմ որ յարութիւն կառնի վերջին դատաստանի ժամանակ», Յիսուսը կըկնեց. «Ես եմ յարութիւնն ու կեանքը, ով ինձ հաւատայ, եթէ մեռնի էլ, դարձեալ կապրի. դու հաւատո՞ւմ ես այս բանին»: Մարթան պատասխանեց, «Այո, Տէր, ես հաւատացել եմ, որ դու ես Աստծու որդի Քրիստոսը, որ աշխարհ պլոտի դար»: Մարթան այս ասելուց ետ, գնաց, թաքուն կանչեց Մարիամին և ասաւ. «Վարդապետը եկել է, կանչում է քեզ»: Մարիամը, երբ այս խօսքերը լսեց, շուտով վերկացաւ և դնաց. Այն Հրէաները, որոնք տանն էին, և սղաւորներին մխիթարում էին, երբ տեսան, որ Մարիամը վեր կացաւ և գնաց, իրանք էլ նրա ետևից գնացին՝ կարծելով թէ գնում է զերեզմանի վրայ լաց լինելու: Մարիամը, երբ տեսաւ Յիսուսին, ոտներն ընկաւ և ասաւ. «Տէր, եթէ այստեղ լինէիր, իմ եղբայրը չէր մեռնի»: Երբ Յիսուս Մարիամին և նրա հետ եկող հիւրերին տեսաւ, որ լալիս էին, սիրտը լցուեց և ասաւ. «Ուր զրիք ննջեցեալին»: Նրանք պատասխանեցին. «Տէր, արի և տես», Յիսուս արտասուեց. Հրէաներն ասում էին. «Տես-

նում էք ինչպէս է սիրում նրան»: Մի քանիսն էլ ասում էին. «Միթէ սա չէր կարող այնպէս անել, որ Ղաղարոսը չմեռնէր»:

Յիսուսը զերեզմանին մօտեցաւ և ասաւ. «Վէր առէք զերեզմանի քարը»: Մարթան ասաւ. «Տէր արդէն հոտած կլինի, որովհետև չորս օրուան թաղած է»: Յիսուսն ասաւ, «Մարթա, չասացի քեզ, որ եթէ հաւատաս, Աստծու փառքը կտեսնես»:

Քարը վեր առան: Յիսուսն աշքերը երկինքը բարձրացըեց և ասաւ. «Հայր, շնորհակալ եմ քեզնից. դու ինձ միշտ լսել ես. ինորում եմ, այս անգամ էլ լսես, որ այս ժողովուրդը հաւատայ, թէ զու ես ուղարկել ինձ»: Այս ասաւ և բարձր ձայնով աղաղակեց. «Ղաղարէ, արի, գուրս եկր: Մեռելն իսկոյն դուրս եկաւ՝ ձեռներն ու ոտները պատանած, իսկ երկու վարշամակի մէջ փաթաթած: Յիսուսն ասաւ. «Արձակեցէք կապերը և թողէք որ գնայ»: Մարիամի հետ եկած հրէաներից շատերը տեսան Յիսուսի արածը և հաւատացին նրան:

Դ.Ա.ԶԱՐՈՒՍԻ ՅԱՐԱԿԻԹԵԱՆ ՇԱՐԱԿԱՆԸ

ԿԵՆՆԴԱՆՈՒԹԵԱՆՑ ԱԱՉԽՈՂ ՔՐԻՍՏՈՆ  
Ի ՐԵԹԱՆԻԱ ԵԿԱՄՈՐԵԱԼ ԱՄՍՈՐ,

Բաքնկամին Դազարու  
Պարզեմ զկենդանութիւն:

Կեանք բաշխող Քրիստոսը Բեթանիա դարձ  
ալար՝ (իւր) բարեկամ Դազարուին կեանք պար-  
պեց:

Տընօրինաքար արտասուելով  
Ընդ Մարթայի և ընդ Մարիամու  
Ողբակցէր և որպէս մարդ հարցանէր.  
Ո՞ւր եղիք զԴազարու:

Կարեկցարար արտասուելով՝ Մարթակի և  
Մարիամի հետ ողբառմ էր և ինչպէս մարդ, հարց-  
նում էր. «Ո՞ւր զրիք Դազարուն».

Եւ որպէս զԱստուած բարբառով  
Յարուցանէ ի մեռելոց զշորեքօրեայն  
Եւ զուգընթաց ճայնին մեռեալն  
Եկն արտաքս անապական:

Եւ իրեն Աստուած՝ խօսքով արութիւն է  
առլիս չորս օրուակ մեռածին և ճայն տալուն ողէն  
մնաելը զարս է զալիս անապական մարմնով.

: Գլ. Բ. (2).

### Տ Ա Ս Ն Կ Ո Յ Ս Ե Բ

Հին ժամանակ հրէաների մէջ այսպիսի  
սովորութիւն կար, որ հարսանիքին փեսան

շէր զալիս հարսի մօտ և նրանց տուն  
տանում, այլ՝ հարսի ընկերունիներից միքանի  
կոյս աղջիկ՝ կէս գիշերին դուրս էին զալիս  
փեսայի առաջ՝ հարսի հետ. Աղջիկները ձեռ-  
ներին ձողեր էին ունենում՝ ծայրից լապ-  
տեր կախած։ Բացի զբանից հետներն ամա-  
նով աւելորդ ձէթ էին վերցնում, որ եթէ  
փեսան ուշանալու լինի, լապտերի մէջ ածեն։  
Փեսան էլ իւր տանից էր դուրս զալիս և  
ընկերների հետ միասին զալիս հարսի առաջ։  
Երկու խմբերը պատահում էին իրար փո-  
ղոցի մէջ։

Այսպէս մի անգամ տասը կոյս աղջիկ  
իրանց լապտերները վեր առան և գնացին  
փեսայի առաջ, նրանցից հինգը յիմար, այս-  
սինքն անզգոյց էին, իսկ հինգը իմաստուն,  
այսինքն զգոյց էին։ Յիմարները մոռացան  
իրանց լապտերների հետ աւելորդ ձէթ  
վերցնել, իսկ իմաստունները՝ վերցըին։ Փե-  
սան ուշացաւ և ամենի քունը տարաւ։

Կէս գիշերին ձայն բարձրացաւ, թէ  
փեսան զալիս է։ Կոյսերը վերկացան և  
լապտերները պատրաստեցին։ Յիմարների  
լապտերների մէջ ձէթ շկար, քիշ էր մնում  
հանգչի, այս պատճառով խնդրեցին իմաս-  
տուններին. «Ձեր ձէթիցը մեզ էլ տուէք,

որովհետեւ մեր լապտերները հանգչում են»:  
իմաստունները պատաժխանեցին, «Մի գուցէ  
մեզ և ձեզ բարական չլինի, աւելի լաւ է  
ծախողների մօտ գնացէք և ձեզ համար  
ձէ՛թ զնեցէք»:  
Երբ նրանք ձէ՛թ առնելու գնացին, փե-  
սան եկաւ, պատրաստ գտնուողները նրա  
հետ մտան հարսանքատունը և դուռը փա-  
կուեց: Ետոյ միւս կոյսերն էլ եկան և ասա-  
ցին, «Ճէ՛ր, բաց արա դուռը»: Փեսան պա-  
տրասխանեց և ասաւ, «Ճշմարիտն եմ տարւմ,  
որ ես ձեզ շեմ ճանաչում»:

### ՏԱՄՆ ԿՈՅՍԽԵՐԻ ՇԱՐԱԿԱՆՔ

Իմաստուն կուսանքն  
Պատրաստեալ իւղ լապտերաց,  
Ելին ընդ առաջ երկնաւոր փեսային  
Վանեալ լապտերօք:

Իմաստուն կուսերը լապտերների համար իւղ  
վերցնելով վառուծ լապտերներով դուրս եկան  
փեսայիտառաջ:

Իսկ յիմարաց կուսիցն  
Ունայնացեալք ի յիտոյ  
Անպատրաստ գուն գալուտեան փեսային  
Ծիշեալ լապտերօք:

Իսկ գմար կուսերը հետները իւղ վերցրած  
չինելով անարատրաստ գոնուեցին փեսայի գալու-  
տեան, որովհետեւ լապտերները հանգած էին:

Գլ. Դ. (3).

**ՅԻ ՍՈՒՍԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ԲԱԺՐԱՐ**

Ղազարոսի յարօւթիւնը տեսնող հրէա-  
ներից մի քանիսը գնացին Յիսուսի թշնա-  
մի փարիսեցիների, քահանաների ու դպիր-  
ների մօտ և պատմեցին իրանց տեսածք:  
Սրանք իսկոյն ժողով արին և ասացին, «Ի՞նչ  
անենք, այն մարդը շատ հրաշքներ է անում,  
եթէ այդպէս թողնենք, ամեքն էլ նրան  
կհաւատան»: Նրանցից մինը՝ որի անունը  
Կայիսիրայ էր, ասաւ. «Դուք ոչինչ շգփտէք  
և հեռուն չէք էլ մտածում. աւելի լաւ է  
Յիսուսին սպանենք՝ քան թէ թողնենք,  
որովհետև այսպէս կրարոգէ և ամենին էլ  
կմոլորեցնէ»: Այն օրից սկսած՝ քահանայա-  
սլետը և փարիսեցիները խորհուրդ արին,  
որ նրան սպանեն: Այս պատճառով հրաման  
ուղարկեցին ամեն կողմ՝ Յիսուսի տեղն իմա-  
նալու, որ բռնեն:

ԴԼ. Դ. (4).

ՅԻՍՈՒՄԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Յարութիւնից ետոյ Յիսուսը քառասուն օր էլի մնաց Երկրիս վրայ. նա երեսն գալիս էր իւր աշակերտների մօտ. Մրանից ետ Յիսուսն առաքեալների հետ Զիթենեաց լեառը բարձրացաւ, այնտեղ պատուէր տուաւ նրանց և տսաւ. «Երուսաղէմից չհեռանաք, այլ սպասեցէք մինչև հայր Աստուած ձեզ աւետիք կուղարկի—սուրբ Հոդին Երկնքից ձեզ վրայ կիջնի և զուք զօրութիւն կստանաք. ետոյ կերթաք, կքարոզէք Երուսաղէմում, Հրէաստանում և միւս Երկրներում ու ամեն տեղ կվկայէք իմ մասին. Աւրեմն գնացէք և բոլոր ազգերին սովորցըէք Հօր, Որ զու և սուրբ Հոգու անունով. Սովորցըէք նրանց, որ պահեն այն ամենը, ինչ որ ձեզ պատուիրեցի. Ով կհաւատայ և կմկրտուի, նա կազատուի. իսկ ով չի հաւատայ, նա կպատժուի:

Եթի այս տսաւ, բարձրացըց ձեռները և օրհնեց նրանց. Օրհնելու ժամանակ բաժանուեց նրանցից և Երկինք բարձրացաւ. Մի ամպ եկաւ, ծածկեց նրան՝ այնպէս որ աշակերտներն այլ ևս շտեսան Յիսուսին.

Նրանք Երկրպագեցին ումեծ ուրախութիւնով ետ զարձան Երուսաղէմ. ամեն օր տաճարում օրհնում էին Աստծուն և սպասում էին սուրբ Հոգուն:

Համբարձման տօնը կատարում ենք Զատկից 40 օր ետոյ:

ԴԼ. Ե. (5).

ՀՈԳԵԳՈՒՄԸ

Զիթենեաց լեռնից առաքեալները զարձան Երուսաղէմ և միասին էին ապրում. Տասն օրից ետոյ Երկնքից յանկարծակի մի ձայն լսուեց՝ սասարկի վչող քամու նման և լցրաւ այն տունը, ուր նստած էին. Ետոյ առանձին առանձին կրակի նման լեզուներ երևացին. այդ լեզուներից ամեն մինը իջաւ նրանցից իւրաքանչիւրի վրայ, ու նրանք սուրբ Հոգուով լցուեցան և սկսան զանազան լեզուներով խօսել:

Բացի տեղացիներից Երուսաղէմում բնակւում էին շատ աստուածավախ հրէաներ, որոնք եկել էին աշխարհի ամեն կողմերից. Եթի Երկնքից իջնող ձայնը լսուեց, ժողովուրդն հաւաքուեց մէկ տեղ. ամենքը զար-

մացած լսում էին, թէ ինչպէս առաքեալ-  
ները բորիշ ուրիշ լեզուներով էին խօսում:  
Ոչ ոք չէր հաւատում իւր տեսածին. սրա  
համար էլ մինը միւսին հարցնում էր. «2է  
որ այս խօսդները բոլորն էլ անուսում  
գալիխացիներ են, տեսէք ինչպէս մեր լե-  
զուներով խօսում և պատմում են Աստծու  
մեծամեծ գործերը — այս ինչ պիտի լինի»:  
Խսկ ոմանք էլ ծաղրում էին և ասում. «Երկի  
սրանք հարրած են»:

Այն ժամանակ Պետրոսը տեղիցը վեր  
կացաւ և սկսաւ այսպէս խօսել. «Ով հրէաս-  
տանցիներ և երուսաղէմում բնակուողներ,  
լաւ լսեցէք՝ ինչ որ ձեզ բարողելու եմ.  
Սրանք հարրած չեն, ինչպէս կարծում էք,  
որովհետև զեռ առաւօտեան ժամի ինն է:  
Լսեցէք, ով իսրայէլացիներ, ես ասեմ ձեղ,  
թէ սա ինչ բան է — Աստուած Յիսուս Նա-  
զովիրեցուն աշխարհ ուղարկեց. նա եկաւ և  
ձեր մէջ հրաշքներ գործեց. թէի դուք նրան  
խաչեցիք, բայց Աստուած երեք օրից ետոյ  
յարութիւն տուաւ. Սրանք ինչ որ անում  
են, ձեր խաչած Քրիստոսի զօրութիւ-  
նովն է»:

Երբ այս քարոզը լսեց Ժողովուրդը,  
զղաց իւր սրտում. Զատերը գալիս էին

Պետրոսի, միւս առաքեալների մօտ և ա-  
սում. «Ի՞նչ անենք»: Պետրոսն էլ ասում էր  
նրանց. «Ապաշխարեցէք և մկրտուեցէք Յի-  
սուս Քրիստոսի անունով: Ով կմկրտուի,  
սուրբ Հոգու շնորհը կրնգունի»: Այն օրը  
երեք հազար մարդ հաւատաց Պետրոսի  
խօքերին և մկրտուեց:

Հոգեգալստեան տօնը կատարում ենք  
Զատկից 50 օր ետ:

### ՀՈԳԵԳԱԼՍՏԵԱՆ ՇԱՐԱԿԱՆ

Այսօր երկնայինքն ուրախացան  
Ընդ երկրաւրացս նորոգումն,  
Քանզի նորոգողն էից Հոգին էջ ի սուրբ  
Վերնաստունն,  
Որով նորոգեցան դասք առաքելոցն:

Այսօր Երկնայիններն (Քրեշտակները) ուրա-  
խացան երկրաւր բնակուողներիս (մարդկանց) նո-  
րոգուելու համար, որովհետև էակներին նորոգուզ  
սուրբ Հոգին իջաւ վերնաստուն և առաքեալների  
դասք նորոգեց:

Այսօր հողանիւթեայ քնութիւնս ցնծայ  
Ընդ հօր հաշտութեան,  
Քանզի որ երարծ զնոգին ի մարդկանէ  
մարմին եղելոց.  
Դարձեալ վերնաստին զնոյն պարզեւէ:

Այսօր մեր հոգեվէն բնութիւնը ուրախանում  
է հայր Աստծու (մարդկանց հետ) հաշտուելու վրայ,  
որովհետեւ նա՝ որ խեց մարդկանցից մարմին դար-  
ձած հոգին (Նոյի ժամանակ), կրկին անդամ նոյն  
(հոգին) պարզեւմ է (մարմին) դարձածներին—  
(մարդոց) \*).

Այսօր մանկունք եկեղեցւոյ տօնեն ցըն-  
ծովթեամք

Զգալուատ սուրբ Հոգոյն.

Որով զարդարեցան ի զգեստս լուսա-  
փայլս եւ գերապայծառ.  
Երգեն ընդ սրովքէն գերեքսրբնին:

Այսօր եկեղեցու մանուկներն ուրախութիւնով  
տօնում են սուրբ Հոգու զալուատը, որի չնորհով  
զարդարուեցան լուսափալ և զերապայծառ զգեստ-  
ներով, (ուստի) երգում են սրովքների հետ Երեք-  
սրբնին (սուրբ, սուրբ Երգը).

Գլ. Զ. (6).

### ՎԵՐԱՓՈԽՈՒԹԻՄ

Յիսուս խաչի վրայից ասաւ Յովհան-  
նէս առաքեալին, որ իւր մօրը խնամք տանի:


\* ) Մարդիկ ուրախանաւմ են, որ հայր Աստծուած  
մարդկանց հետ հաշտուեց, որովհետեւ Նոյի ժամանակ  
մարդիկ վատացել էին Սասուած էլ իւր հոգին նրանցից  
վերացրել էր իսկ այսօր նոյն հոգին պարզեւում է:

Այն օրից սկսած Մարիամը 16 տարի շա-  
բունակ Յովհաննիսի մօտ էր ապրում մինչև ՀԱՅՈՏԵՐԱ  
ԻՆՍԻՏՈՒՏ  
ԵԴԵՆԻ  
ՀԵԿԱՆԻ ՀԱՅ  
Հ Ը Ր

Երբ սուրբ կոյս Մարիամը մեռաւ, առ  
ուրաքանչերը թաղեցին նրան Գեթսեմանի  
պարտէզում, որտեղ Յուղան Յիսուսին զի-  
նուորների ձեռը մատնեց: Աստուածածնի  
մահուան ժամանակ բոլոր առաքեալները՝  
բացի Բարդուղիմէոսից, Երուսաղէմումն էին:  
Երբ Բարդուղիմէոսը Երուսաղէմ եկաւ և  
իմացաւ Տիրամօր մահը, խիստ տխրեց և  
ցանկացաւ տեսնել նրա գերեզմանը: Առա-  
քեալները նրան Գեթսեմանի պարտէզը տա-  
րան, բայց որքան զարմացան, երբ գերեզ-  
մանը բաց արին և ոչինչ շգտան, որովհե-  
տեւ Յիսուս Քրիստոս հրեշտակների ձեռով  
իւր մօր մարմինը երկինք էր տարել, այսինքն  
վերափոխել էր:

Բարդուղիմէոս առաքեալը շատ էր ցա-  
ւում, որ չկարողացաւ ոչ Տիրամօրը տեսնել,  
և ոչ նրա մարմինը: Միւս առաքեալները  
Բարդուղիմէոսին միխթարելու համար՝ Աս-  
տուածածնի պատկերն ընծայեցին նրան:  
Բարդուղիմէոս առաքեալը մի վանք շինեց  
և այս պատկերն այնտեղ դրաւ:

Մեր եկեղեցին տօնում է այդ օրը՝ երբ  
հրեշտակները սուրբ կոյս Մարիամի մար-



մինը երկինք տարան, այսինքն վերափոխեցին և դրա համար էլ այդ տօնի անունը վերափոխումն է:

Այդ օրը եկեղեցի ենք գնում և խընդրում ենք Աստուածածնից, որ բարեխօս լինի իւր որդի Յիսուս Քրիստոսի՝ մօտ մեր ազօթքը լսելու, դրա համար էլ եկեղեցում էրգում ենք —

«Փառաւորեալ եւ օրհնեալ միշտ սուրբ կրիս Աստուածածին Մարիամ, մայր Քրիստոսի, մատո զաղաշանս մնը որդույ քո եւ Աստուծոյ մնրոյ:

Ով գու փառաւորուած և օրհնուած, միշտ սուրբ կորմ՝ Քրիստոսի մայր՝ Մարիամ Աստուածածին, մեր ազօթքը հասցրու քո Որդուն՝ մեր Աստոծուն:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾՍԾՆԻ ՇԱՐԱԿԱՆՔ

Անկանիմք առաջի քո Աստուածածին եւ աղաշեմք զանարատ զլոյսդ:

Քո առաջն ենք ընկնում (երկրագութիւն տալիս) ու Աստուածածին և աղաշում ենք քեզ՝ անարատ կուսիդ:

Բարեխօսեա՛ վասն անձանց մնրոց եւ աղաշեա՛ զՄիածին որդին:

Բարեխօսիր մեզ համար և աղաչիր Միածին որդուն:

Փրկնլ զմեզ ի փորձութենէ եւյամննայն վտանգից մերոց:

Որպէսզի աղատէ մեզ փորձութիւնից և ամեն առևսակ վտանգից:

Վերափոխման տօնին եղեցում խաղող ենք օրհնում:

ԴԼ. Է. (7).

**ԱԲԳԱՐ ԹԱԳԱՒԱՐԸ ԴԵՍՊԱՆՆԵՐ Է ՈՒՂԱՐԿՈՒՄ ՅԻՍՈՒՍԻ ՄՕՏ**

Հայոց Աբգար թագաւորը եօթը տարի շարունակ հիւանդ էր. ամեն տեսակ դեղեք գործ էր զրել, բայց չէր առողջացել: Աբգարը լսեց, որ Հրէաստանում Յիսուս առանց դեղի բժշկում է ամեն տեսակ հիւանդութիւններ, այդ պատճառով նամակ զրեց և դեսպանների ձեռով ուղարկեց, որ զայ և իրան բժշկի: Ահա Աբգարի զրած նամակը. «Ես լսել եմ, որ դու առանց դեղի բժշկում ես հիւանդներին—կոյրերի աշքը բաց ես անում. կաղերին ոտն ես տալիս. բորոտնե-

ըին սըբում ես. երկար ժամանակ հիւանդութիւն ունեցողներին առողջացնում ես և մինչև անգամ մեռելներին յարութիւն ես տալիս: Երբ ես այս բոլորը լսեցի, ինքս ինձ ասացի, որ դու կամ երկնքից իշած Աստուած ես և կամ Աստծու որդի: Ազաշում եմ քեզ, արի և ինձ բժշկիք: Լսեցի նոյնպէս, որ հրէանները քեզ նեղացնում են. ես մի փոքրիկ քաղաք ունեմ, եկ ինձ մօտ, երկուսիս էլ բաւական է. քեզ այստեղ ոչ ոք չի նեղացնիք: Վերջը պատուիրեց դեսպաններին, որ եթէ Յիսուս չկարողանայ գալ պատկերը քաշեն և իրան բերեն: Այս բանի համար մի նկարիչ ուղարկեց:

---

Դեսպանները նամակը Յիսուսին տարան: Նա չկարողացաւ գալ և մեր Աբգար թագաւորին այս պատասխանը զբեց. «Երանի նրան՝ ով ինձ չի տեսել, բայց հաւատում է; Գրում ես, որ քեզ մօտ գամ, չեմ կարող, որովհետև ես չեմ եկել հանդիսատապերելու՝ այլ՝ չարչարուելու և խաչուելու: Երբ այս բոլորը վերջացնեմ, ետոյ հայր Աստծու մօտ պիտի գնամ: Իսկ իմ չամբարձումից ետոյ աշակերտներիցս մինին կու-

դարկեմ, որ գայ քեզ բժշկի և քո ժողովը ունի էլ քրիստոնեայ դարձնիւ: Նկարիչը երբ տեսաւ, որ Յիսուս չի գալիս, սկսաւ նրա պատկերը նկարել, բայց չէր կարողանում: Յիսուս նկարչին իւր մօտ կանչեց. մի կտոր մաքուր կտաւ առաւ. Երեսին ծածկեց և նրա վրայ նկարուեց իւր պատկերը: Ետոյ նկարչին տուաւ, որ տանի Աբգարին: Այս պատկերը կոչւում է դաստառակամ անձեռագործ պատկեր:

ԴԼ. ՀԼ. (8).

ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒ ՂԻՄԵՈՍ

Յիսուս բացի 12 առաքեալներից 72  
աշակերտ էլ ունէր:

Համբարձումից ետ աշակերտներից մի նը՝ Թաղէոս անունով, Հայաստան եկաւ: Երբ սա Աբգարի պալատը մտաւ. թագաւորը երկրպագութիւն տուաւ նրան: Թաղէոսը քարոզեց թագաւորին, բոլոր քաղաքացիներին և ասաւ, որ Քրիստոսին հաւատան և նրա ասածները կատարեն: Աբգարի գըլիին ձեռը զրաւ և բժշկեց. նոյնպէս քաղաքի բոլոր հիւանդներին: Այս բանը որ տեսան քաղաքացիները, հաւատացին Քրիստո-

սին և մկրտուեցան։ Սուրբ Թաղէոսը երկար ժամանակ չմնաց այնտեղ—նա միւս առաքեալների նման պիտի ման գար զանազան տեղեր և քարոզէր, այս պատճառով թագաւորի թագ շինող Աղդէին եպիսկոպոս ձեռնադրեց և հովիւ նշանակեց այս նոր քրիստոնեաների վրայ։ Թաղէոսը Արգարից հրաման առաւ և գնաց Հայաստան՝ թագաւորի քրոջորդի Սանատրուկի մօտ, քարոզեց նրան և նրա մարդկանց ու ամենին էլ մկրտեց։ Սանատրուկի աղջիկ Սանդուխտին ևս մկրտեց։

Սանատրուկը շատ կարճ ժամանակ քրիստոնեայ մնաց—հինգ Արգարի մահից ետ՝ ուրացաւ քրիստոնէութիւնը և սկսաւ չարչարել քրիստոնեանիրին ու նահատակել։ Իւր Սանդուխտ աղջկան շատ ասաւ, որ ուրանայ քրիստոնէութիւնը, բայց նա շլեց։ Սանդուխտ կոյսը պատասխանեց, որ կուռքերին ոչ մի ժամանակ երկրպագութիւն չեմ տալ, կմեռնեմ, կուռք չեմ պաշտիլ։ Հայրը իւր աղջկան նահատակել տուաւեայց սրանով շրաւականացաւ—որովհետեւ Սանդուխտ կոյսը Սուրբ Թաղէոսից էր ուսեբ քրիստոնէութիւնը, այս պատճառով նրան էլ նահատակել տուաւ։

Այսպէս թէ ուսուցիչը և թէ աշակեր-

տուհին լաւ համարեցին մեռնել՝ քան թէ կուռք պաշտել։

Սուրբ Թաղէոսի մահից ետ՝ Յիսուսի աշակերտներից մի ուրիշը եկաւ Հայաստան, որ քրիստոնէութիւնը քարոզի—սրա անունն էր Բարդուղիմէոս։ Սա բերաւ իւր հետ սուրբ կոյս Մարիամի պատկերը։ Տիգրիս գետի ափին մի վանք շինեց։ Աստուածածին անունով և այն պատկերն այնտեղ դրաւ։

Սուրբ Թաղէոս և Բարդուղիմէոսն առաջին անգամ նկան մեր երկիրը քրիստոնէութիւնը քարոզելու և լուսաւոր ելու հայերին, սրա համար էլ նրանց անուանում ենք առաջին (նախկին) լուսաւորի չներ։ Որովհետև նրանք այդպիսի գեղեցիկ օրինակ են թողել մեզ համար։ մենք էլ ամեն տարի նրանց անունը յիշում ենք եկեղեցում և տօն կատարում։ Այդ օրը երգում ենք.

ՇԱՐԱԿԱՆ ԱՌԱԲԵԼՈՑ

Հայրատունկ այզւյն հրեղէն պարիսպք և քարձր աշտարակք, ուկեղէն քածակք և ժիր մատոռակք Հայաստանեայց, հարք

Հոգեւորք, Բարդուղիմէոս և Թաղէոս, բարեխօս լեռոք առ տէր վասն անձանց մերոց:

Հալբատունկ արտու (Ակեղեցու) հրեղէն պարփակներ և բարձր աշտարակներ, ոսկեղէն բաժակներ և ժիր մասուռակներ—ով դուք հայտառանցներիս հոգեսր հալբեր՝ Թաղէոս և Բարդուղիմէոս, բարեխօս եղէք տիրոջ առաջ մեզ համար:

Թագաւոր երկնաւոր,  
Զեկեղեցի քո անշարժ պահեա՛,  
Եւ գերկրպագոս անուանդ քոմ  
Փահեա՛ ի խաղաղութեան:

Երկնաւոր թագաւոր (Յիսուս), քո եկեղեցին անշարժ պահիր. քո անուան երկրպագութիւն տուղներին խաղաղութեան մէջ պահիր:

Գլ. Թ. (9).

Ս. Գրիգոր (կամ Երկրորդ) ԼՈՒՍԱԿՈՐԻ<sup>2</sup>

Պարսից Արտաշիը թագաւորը մի օր իւր պալատականների հետ այսպէս խօսեց—ով հայոց Խոսրով թագաւորին սպանի, ինչ կամենայ, ինձնից կստանայ: Անակ անունով մինը՝ Խոստացաւ Արտաշի ցանկութիւնը կատարել: Սա վերցրաւ իւր ընտանիքը. հասաւ Հայաստանի սահմանը և այն-

պէս ցոյց տուաւ՝ որպէս թէ Պարսից թագաւորն իրան հալածում է և մեր թագաւորից պաշտպանութիւն խնդրեց: Խոսրովն Անակին սիրով ընզունեց: Նա այնպէս էլ կարծում, որ վախստականը շատ տեղեկութիւններ կյայտնի Արտաշրի զօրքի և նրա բոլոր գործերի մասին, այս պատճառով Անակին՝ հէնց իւր պալատում տեղ տուաւ: Այսուհետև Արտաշրի լրտես Անակը միայն նրա մասին էլ մտածում, թէ ինչպէս սպանի մեր թագաւորին:

Մի օր Խոսրովը որսի գնաց իւր պալատականների հետ: Անակին էլ հետի առաւ: Որսի ժամանակ Անակը Խոսրովին փոքր ինչ հեռու տարաւ՝ որպէս թէ ծածուկ բան ունի ասելու: Այսեղ սրով խփեց թագաւորին, իսկ ինքը ձի նստեց և սկսաւ վախչել: Մարդիկ ետեիցն ընկան: Անակը վախաւ, ձգեց իրան երասի գետը և խեղդուեց: Խոսրովը զեռ չէր մեռել, որ հրամայեց Անակի ընտանիքը կրտորել: Թագաւորի հրամանը կատարուեց—նրա ընտանիքը սրի անցրին: Միայն մանուկ Գրիգորին իւր Սօֆիա դայեակը վախցրաւ և տարաւ Կեսարիա քաքարը: Այս ըստը

Երբ Արտաշըին լուր հասաւ, թէ Անակը սպանել է Խոսրովին, մեծ զօրք առաւ և եկաւ Հայաստան, որ Խոսրովի տունը ջնջի։ Հայերը չկարողացան պարսիկների դէմ կռուել։ Արտաշիրը մտաւ մեր երկիրը և հրամայեց Խոսրովի ընտանիքը կոտորել։ Այսպէս էլ արին։ Միայն Տրդատ անունով մի տղայ հագիւ կարողացան փախցնել և Հռովմ քաղաքը տանել։

Սօվիան Գրիգորին պահում էր Կեսարիայում։ Փոքր ինչ որ մեծացաւ, նրան ուսումնարան ուղարկեց, ուր սովորում էր յունարէն և ասորերէն։ Սօվիան ինքը քրիստոնեայ էր. փոքրիկ Գրիգորին սովորցը ից, ինչ որ հարկաւոր էր քրիստոնէական կրօնի համար։ Երբ Գրիգորը չափանս դարձաւ, ամուսնացաւ Մարիամ անունով մի աղջկայ հետ և նրանից երկու որդի ունեցաւ՝ Վըրթանէս և Արիստակէս։ Նրանից ետ Մարիամի համաձայնութիւնով Գրիգորը բաժանուեց նրանից։ Մարիամը կուսանոց մտաւ։

Գրիգորին պատմեցին, որ իւր հայր Ընակը սպանել է Խոսրով թագաւորին, որի որդի Տրդատը Հռովմում է, սրա համար էլ վերկացաւ և գնաց այն քաղաքը, որ իւր

մեղաւոր հօր փոխարէն Տրդատի մօտ ծառայութիւն անի և սրանով հօր մեղքերը փոքր ինչ թեթեացնի։

Խոսրովի որդի Տրդատն էլ Հռովմումն էր մեծանում Դիոկղետիանոս կայսրի մօտ։ Երբ հասակն առաւ, զինուորական ծառայութեան մէջ մտաւ։ Տրդատը մեծ ոյժ ունէր, լաւ ձի նստել և զէնք գործածել գիաէր։ Մի անդամ ձեռով բռնեց եզան եղիշւրը և քաշեց, հանեց։ Մի անդամ էլ ընկերի հետ կառք էին քշում. ընկերը ղիտմամբ Տրդատին կառքից վեր ձգեց, բայց սա ետևից վազեց և կառքից այնպէս բըռնեց, որ ձիերն էլ չկարողացան առաջ գնալ։ Մի անդամ էլ Հռովմ քաղաքի Դիոկղետիանոս կայսրը պատերազմ ունէր։ Թշնամին մարդ ուղարկեց և այսպէս էր ասում—փոխանակ զօրքով մէկ մէկու հետ կռուելու և ի զուր տեղը մարդիկ սպանելու, արի ես ու զու մենամարտենք. եթէ ես յաղթեմ, դուք ամենքդ ինձ ծառայ եղէք, իսկ եթէ դու յաղթես, մենք ամենք քեզ հարկ տանք։

Դիոկղետիանոսը այս բանից խիստ վախցաւ և չգիտէր, թէ ինչ անի։ Կայսրի զօրավարներից մէկն առաւ. «Տէր թագաւոր»

ամենեին մի մտածիր այդ մասին. իմ գնդի  
մէջ հայոց թագաւորի ցեղից մի տղայ կայ՝  
անունը Տրդատ, նա կարող է քեզ ազատել».   
և Տրդատի մասին շատ բաներ պատմեց:  
Դիոկետիանոսն իսկոյն Տրդատին իւր մօտ  
կանչել տուաւ. Թագաւորական զգեստ հագ-  
ցրաւ. Թագաւորի նշաններով զարդարեց և  
ամեն տեղ յայտնեց, որ նա կայսրն ինքն է:  
Միւս որը թշնամու թագաւորի մօտ մարդ  
ուղարկեց ասելու, որ վաղն իրար հետ մե-  
նամարտելու են: Երկրորդ օրը Տրդատը ձի  
նստաւ. Քշեց թշնամու կողմը, յարձակուեց  
նրա վրայ. բոնեց և Դիոկետիանոսի մօտ  
բերաւ: Կայսրը շափից դուրս ուրախացաւ,  
որ իրան ազատողը Հայոց թագաւոր Խոս-  
րովի որդին է. Թագաւորական զգեստ  
հագցրաւ. զլսին թագ դրաւ. հոռվմէական  
զօրք տուաւ, որ գնայ Հայաստան և իւր  
հօր փոխարէն թագաւորէ:

Տրդատը հասաւ Կեսարիա քաղաքը:  
Գրիգորը նրա հետն էր: Հայ նախարարները,  
երբ իմացան, որ իրանց թագաւորի որդին  
զօրքով գալիս է, եկան, միացան նրա հետ,  
որպէսզի պարսիկներին դուրս անեն մեր  
Երկրից:

Տրդատը հասաւ Երիզա քաղաքը: Այս-  
տեղ մի չաստուածուհի կաը՝ անունը Անա-  
հիտ, որին մեր պապերը պաշտում էին:   
Այստեղ Անահիտին զո՞ն բերին և խնդրեցին,  
որ յաջողութիւն տայ իրանց զործին: Թա-  
գաւորը, բոլոր զինուորները զնում էին և  
Երկրպաղութիւն տալիս կուռքին: Հերթը  
Գրիգորին հասաւ: Տրդատը հրամայեց, որ  
նա էլ Անահիտին աղօթք անի: Բայց Գրի-  
գորը քրիստոնեայ էր, չուզեց կուռքին Եր-  
կրպաղութիւն տալ: Տրդատը բարկացաւ  
Գրիգորի վրայ և հրամայեց, որ անպատճառ  
Անահիտի առաջ աղօթի: Գրիգորը չուզեց:  
Այն ժամանակ թագաւորին պատմեցին, որ  
նա իւր հօրը սպանող Անակի որդին է:  
Տրդատը աւելի ևս բարկացաւ, հրամայեց  
Գրիգորին խիստ պատիճներ տալ—պատուի-  
րեց, որ աւանեն Արտաշատ քաղաքի Խորի-  
րապը ձգեն, որպէսզի այնտեղ սովից մեռ-  
նի: Այս վիրապը լի էր բազմաթիւ օձերով  
և կարիճներով: Այստեղ ձգում էին յանցա-  
ւորներին: Գրիգորը 15 տարի մնաց այնտեղ:  
Մի քրիստոնեայ կին Աստծու հրամանով  
ամեն օր մի-մի հաց էր ձգում հօրը, որ  
Գրիգորն ուտի և շմեռնի:

Տրդատը Հայաստան հասաւ. դուրս ա-  
րաւ պարսիկներին և ինքն սկսաւ կառավա-

ըել։ Թագաւորը կռապաշտ էր, զըա համար էլ հրաման հանեց, որ իւր տէրութեան մէջ՝ որ էլ քրիստոնեայ գտնեն, ստիպեն կուռքերին երկրպագութիւն տալու; իսկ եթէ հակառակողներ լինեն, իսկոյն սպանեն նրանց։

ԴԼ. Ժ. (10).

ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՅՍԵՐԸ  
ՓԱԽՉՈՒՄ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Դիոկղետիանոս կայսը կամենում էր իւր համար կին առնել։ Ամեն կողմ պատկերահաններ ուղարկեց, որ թագուհի լինելու արժանի աղջիկներ գտնեն. նրանց պատկերները նկարեն և իրան բերեն։ Եյս պատկերահաններից մի քանիսն էլ Հռովմ քաղաքի մօտ գտնուող կուսանոցը գնացին։ Եյսեղ մի գեղեցիկ կոյս կար՝ անունը Հռիփսիմէ. սրա պատկերն ուժով քաշեցին և կայսրին տարան։ Կայսը հաւանեց Հռիփսիմէին և ուզումէր նրան թագուհի քարձնել։

Երբ այս բանն իմացաւ կուսանոցի մայրապետ Գայիանէն, բոլոր կոյսերին հաւաքեց և Հռիփսիմէի հետ միասին փախան, եկան Հայաստան ու Վաղարշապատ քաղաքի մի այգու հնձանում բնակուեցին։ Կոյսե-

քից մինն ապակիէ յուլունքներ էր շինում։ Ժախում էին և սրանով ապրում։

Դիոկղետիանոսը խիստ բարկացաւ փախած կոյսերի վրայ. ամեն կողմ մարդ ուղարկեց, որ նրանց գտնեն։ Երբ իմացաւ, որ Հռիփսիմէն Հայաստան է փախել, մեր Տրդատ թագաւորին էլ նամակ գրեց, որի մէջ ասում էր. «Եթէ կոյսերին գտնես, Հռիփսիմէին ինձ ուղարկիր, միւսներին ապանիր, իսկ եթէ ցանկանաս, կարող ես ամուսնանալ նրա հետ»։

Տրդատն այս թուղթն ստանալուն պէս՝ իւր երկրի մէջ ամեն կողմ մարդ ուղարկեց, որ վինտուեն նրանց։ Մի քանի օրից ետ կոյսերին գտան. Թագաւորը հրամայեց հրնանը զինուորներով պատել. Պալատից թանկագին շորեր ուղարկեց, որ հազցնեն Հռիփսիմէին և իւր մօտ բերեն, որովհետև միտք ունէր նրա հետ ամուսնանալ. Հռիփսիմէն չէր կամենում պալատ գնալ, բայց թագաւորը հրամայեց իւր ծառաներին, որ նրան ուժով բերեն պալատ։ Թագաւորի հրամանը կատարուեց—Հռիփսիմէին քաշտալով մինչև պալատ տարան։ Հռիփսիմէն ոչ մի ձեռով շհամաձայնեց թագուհի դառ-

նալ. վախաւ և գնաց իւր ընկերուհիների մօտ. պատմեց նրանց իւր գլխովն անցածը. փոքը ինչ հուացաւ նրանցից և սկսաւ Աստըծուն աղօթել և չնորհակալութիւն ամել, որ իրան այդպիսի վտանգից ազատեց. Այդ միջոցին թագաւորի դահիճները ջահերը ձեռներին եկան. դտան չոփսիմէին. լեզուն կտրեցին. աչքերը հանեցին և մարմինը կտոր-կտոր արին. Հոփսիմէից ետսպանեցին նրա ՅՅ ընկերուհիներին մայրապետի հետ միասին:

ԴԼ. ԺԴ. (11).

Ս. ԳՐԻԳՈՐԻՆ ԳՈՒՐԾ ԵՆ ԲԵՐՈՒՄ ՎՃՐԱՊԻՑ

Թագաւորն այս բանի վրայ շատ էր մտածում. նրա խիղճը տանջում էր իրան. հանդիսաւ չունէր, քունը չէր տանում. Տըրդատը խելազարի պէս՝ վայընի խոզի նման թափառում էր. Թագաւորի քոյր Խոսքովագուխատը մի բարի աղջիկ էր. Հըեշտակը սրան երազում երեաց և ասաւ. «Եթէ կամենում էք, որ թագաւորն առողջանայ, Գրիգորին պիտի վիրապից հանէք; նայ միայն կարող է բժշկել. Խոսքովագուխատըն այս երազը նախարարներին պատմեց, նրանք չհաւատացին, ամենեին չէին

կարծում, թէ Գրիգորը 15 տարի վիրապում կենդանի մնացած լինի. Երեք ամողամ նոյն երազը կըկնուեց, ետոյ հաւատացին. Այնուհետեւ Խորվիրապ դնացին, չուանը կախարին և ձայն տուին. «Գրիգոր, եթէ կենդանի ես, դուրս արի. Աստուած հրամայեց, որ քեզ այստեղից հանենք»: Գրիգորը կենդանի էր. Նրան դուրս հանեցին և Վաղարշապատ բերին. Տըրդատը և նախարարները Գրիգորի ոտներն էին ընկնում և ներողութիւն խնդրում: Գրիգորն աղօթեց Աստծուն և խնդրեց, որ իրան կարողութիւն տայ. հիւանդ թագաւորին և նախարարներին բըժկելու: Սրանից ետոյ փողոցներում թափուած կոյսերի մարմիները թաղել տուաւ: Երկրորդ օրը նախարարները թագաւորի հետ Գրիգորի մօտ եկան և խնդրեցին, որ ճշմարիտ հաւատը սովորեցնի իրանց: Գրիգորը շատ ուրախացաւ այս բարի բանի վրայ և ՅՅ օր շաբունակ քարոզում և ուսուցանում էր նրանց քըիստոնէական հաւատը:

Տըրդատը, իշխանները և ժողովուրդը հաւատացել էին Քրիստոսին և ընդունել քրիստոնէութիւնը, բայց ոչ քահանայ ունէին

և ոչ եպիսկոպոս, որ քարոզէր և սովորցնէր նրանց, այս պատճառով Տըլատ Ժադառը Գրիգորին Կեսարիա քաղաքն ուղարկեց, որ Ամոնդ արքեպիսկոպոսից կաթողիկոս ձեռնադրուի և նոր քրիստոնեայ դարձած հայ ժողովրդին սովորցնի քրիստոնէութիւնը: Գրիգոր Կեսարիա գնաց: Ամոնդը կաթողիկոս ձեռնադրեց նրան: Վերադառնալիս Սուրբ Յովհաննէս Մկրտչի և Աթանագինեայ եպիսկոպոսի մասունքների մի մասը հետն առաւ՝ դարձաւ Հայաստան՝ Մուշքաղարի կողմերը: Նա հետը բերաւ և շատ քահանաներ:

Այդտեղ կուատներ կային, բոլորն էլ քանդեց. կուռքերի սեղանները կործանեց. նրանց տեղ եկեղեցի շինեց և Յովհաննէս Մկրտչի մասունքն այնտեղ դրաւ: Այս եկեղեցու անունը Սուրբ Կարապետ դրաւ, ուր մինչև այսօր էլ անմիւ ուխտաւորներ ուխտեն դնում:

Տըլատը, երբ իմացու որ Սուրբ Գրիգորը վերադարձել է Կեսարիայից, դուրս եկաւ նրա առաջ իշխանների և ժողովրդի հետ միասին: Սուրբ Գրիգորը 30 օր ծոմ պահել տուաւ նրանց, ետոյ թագաւորին, նրա ընտանիքին,

իշխաններին և անթիւ ժողովրդեան մկրտեց եփրատ գետի մէջ: Սուրբ Գրիգորը եօթնօր մաց այնտեղ և չորս միլիոնից աւելի մարդ մկրտեց:

Սրանից ետ Սուրբ Գրիգորը Տըլատին խորհուրդ տուաւ, որ Հայաստանում ամեն տեղ ուսումնարաններ բանայ, քահանաներ պատրաստի, որ մնացած հեթանոս հայ ժողովրդին քարոզեն և մկրտեն: Այս ուսումնարաններից մի քանիսում յունարէն և մի քանիսում էլ ասորերէն էին սովորցնում, որովհետեւ գեռ ևս հայերէն զրեր չկար: Բացի սրանից Սուրբ Գրիգորը 12 եպիսկոպոս ձեռնադրեց հայերի համար:

Սուրբ Գրիգորը եղաւ մեր առաջին եպիսկոպոսապետը՝ հայրապետը՝ կաթողիկոսը: Նա Հայաստանի ամեն կողմերում ուսումնարաններ բաց անել տուաւ. այստեղից ուսումն աւարտածները քահանաներ էին դառնում և հայերին հետզհետէ քրիստոնեայ դարձնում - մի խօսքով Սուրբ Գրիգորը մեր երկիրը լուսաւորեց և դրա համար էլ նրան ասում ենք Սուրբ Գրիգոր (կամ երկրորդ) Լուսաւորիչ:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ՇԱՐԱԿԱՆԸ

Այսօր զարմանալի լուսոյն ծագողն  
Ի խաւարի նստելոց  
զԴրիգորիոս սուրբ հայրապետն  
Եկայք վերապատուեցուք:

Խաւարի մէջ նստողներիս իմանալի (մատոր)  
լուս առաջ Ս. Գրիգոր հայրապետին եկէք ալսօր  
վերապատուենք:

Այսօր զանապական Հոգոյն պարզեւա  
թաշխող որդուց Թորգուայ.  
Յորդիս լուսոյ նովաւ ծնեալք.  
Եկայք վերապատուեցուք:

Անապական հոգոյ պարզեները Թորգուայ  
որդոց բաշխողին (Ա) նրանից (Ս. Հոգուց) լուսոյ  
որդիներ ծնածներո, եկէք վերապատուենք:

Այսօր զաստուածային քանին պատժող  
Ի Հայաստան աշխարհի.  
Աշակերտեալ նմա մանկունք.  
Եկայք վերապատուեցուք:

Հայաստան աշխարհում Աստծու խօսքը քա-  
րողողին, ով նրան աշակերտող մանուկներ, եկէք  
ալսօր վերապատուենք:

Այսօր երգէ եկեղեցի որդուվք իւրովք  
Հնդ հրեշտակա,

Յիշատակի լուսաւորչին  
Փառք ի բարձունս Աստուծոյ:

Ալսօր եղեղեցին խոր որդիկերանցով հրեշտակ-  
ների հնա միասին՝ Լուսաւորչի վիշտակի համար՝  
երգում է—«Փառք ի բարձունս Աստուծոյ»:

Գլ. ԺԲ. (12).

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐՉԻ ԵՐԱԶԸ

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը մի անգամ  
երազում տեսաւ, որ երկինքը բացուեց և  
սկսաւ այնտեղից լոյս իջնել դէպի երկիրը:  
Լուսի հետ միասին իջաւ Աստծու միածին  
որդին՝ ձեռին բոնած ոսկէ ուռն։ Այս մարդն  
իջաւ Վաղարշապատ քաղաքի մէջ տեղը և  
գետնին ուռով խփեց։ Խսկոյն գետնի տա-  
կից՝ այսինքն անդնդից սարսափելի ձայներ  
լսուեցին։ Սրանից ետ թագաւորի պալատի  
վրայ երևաց ոսկէ խարիսխ, որի մեծու-  
թիւնը մի մեծ բլրի չափ էր։ Ծյս խարս-  
թիւնը մի մեծ բլրի չափ էր։ Սիւնի վրայ ամ-  
պեղին գմբէթ՝ եկեղեցու նման։ Խսկ գմբէ-  
թի վրայ էլ՝ լուսաւոր խաչ։

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը զարմացած  
նայում էր և չգիտէր, թէ ինչ նշանակու-  
թիւն ունեն այս ամենը։ Աստծու հրեշտակին

Իշաւ երկնքից և մեկնեց Սուրբ Գրիգորին  
-րա երազը: Հրեշտակին ասաւ նա, որ ձե-  
ռին ոսկէ ուռն ունէր բռնած՝ Աստծու որ-  
դի Յիսուս Քրիստոսն (Միածին) էր. հրեղէն  
սիւնը՝ այժմեան Եջմիածնի տաճարը, իսկ  
լուսաւոր խաչը՝ հայոց կաթողիկոսութիւնն  
է: Հրեշտակը յայտնեց, որ այս ուռով խփած  
տեղը եկեղեցի պիտի շինել. այնտեղ պիտի  
աղօթեն ըոլոր քըլիստոնեաները. հայոց կա-  
թողիկոսի աթոռն այնտեղ պիտի հաստա-  
տուի, այսինքն հայոց կաթողիկոսներն այն-  
տեղ պիտի նստեն:

Գլ. ԺԴ. (13).

Է ՏԻ ԸՆԴ ՏԻ ՏԱ ԱՐԻ ՋԻՆՈՒԹԻՒՆԸ

Միւս օրը Սուրբ Գրիգորը պատմեց այս  
երազը Տրդատ թագաւորին, նախարարնե-  
րին, ժողովրդին և պատուիրեց, որ հրեշ-  
տակի ցոյց տուած տեղի չորս կողմը քա-  
րէ պատ շինեն: Սուրբ Գրիգորն այդ երազը  
թագաւորին և նրա նախարարներին մկըր-  
տելուց առաջ էր տեսել: Երբ թագաւորա-  
կան տունը և ժողովրդին մկըրտեց, Վաղար-  
շապատ դարձաւ և Միածնի իջած տեղում  
303 թուին մի եկեղեցի շինեցին այն ձեռվ՝

Խնչպէս որ երազ էր տեսել: Այս եկեղեցին  
առաջ Շողակաթ էր յիշւում, որովհետեւ  
լոյսը, այսինքն շողը այստեղ կաթեց:  
Այժմ այլ ևս Շողակաթ չեն ասում, այլ՝ Եջ-  
միածնին, որ նշանակում է թէ այնտեղ իջաւ  
Միածնը՝ Յիսուս Քրիստոսը: Եկեղեցու  
շինութեան վրայ աշխատում էին ոչ թէ  
միայն ժողովուրդը՝ այլև թագաւորն ինքը,  
Աշխէն թագուհին, թագաւորի որդին, քոյըը,  
նախարարներն ու իշխանները: Բացի Եջ-  
միածնից Սուրբ Լուսաւորիչը ուրիշ եկեղե-  
ցիներ էլ շինեց —մինը Գայիանէ կոյսի անու-  
նով, միւսը Հոփիսիմէի և սրանցում թաղեց  
նրանց մարմինները, իսկ երրորդ եկեղեցին  
հնձանի տեղում շինեց, որն այժմ կոչում է  
Շողակաթ:

Սուրբ Եջմիածնը 303 թուից սկսած  
բոլոր հայերի մայր եկեղեցին է. այնտեղ է  
նստում հայոց կաթուղիկոսը:

---

Ս. Եջմիածնի հիմնարկութիւնը մեր ե-  
կեղեցին տօնում է Հոգեգալստից երկու շա-  
բաթ ետ:

---

Ե՞չ Միածինն ի չօրէ  
եւ լոս փառաց ընդ նմա,  
Զայնք հաշեցին  
Սանդարամնտք անդնդոց:

Միածինը (Յիսուս) լուսով պատաժ իջաւ Հօ-  
րից (Երկնքից), սանդարամնտի (զժոխքի) անդնդից  
ձանկներ լսուեցան:

Ճեսեալ զլոյս  
Մեծ հայրապետին Գրիգորի.  
Պատմէր ցնծութեամբ  
Հաւատացեալ արքային:

Մեծ հալրապետ Գրիգորը լուսը աւանդնելով  
ուրախութիւնով պատմում էր հաւատացեալ թա-  
գաւորին:

Եկայք շինեցուք  
Սուրբ գլուրանն լուսոյ,  
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս  
ի Հայաստան աշխարհի:

Եկէք լուսով սուրբ խորանը (ուղան, ևկեղե-  
ցի) շինենք, որովհեան Հայաստան աշխարհի մէջ  
ալսուել լոյս ծագեց մեզ համար:

Բարեխօսութեամբ վերին քո զօրաց,  
Միշտ անշարժ պահեա՛ զաթոռ Հայ-  
կազնեաց:

Քո վերին զօրքերի (հրեշտակների) բարե-  
խօսութիւնով միշտ անշարժ պահեա՛ հայկազների  
աթոռը (հայոց եկեղեցին, Եղմլածինը):

### ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԵԼԱՏՈՅ ՀԱՆԳԱՆԱԿԻ

Հաւատամը ի մի  
Աստուած ի Հայրն ա-  
մենակալ, յարարիշն  
երկնի և երկրի՝ երեե-  
լեաց և աներեսութից:

Եւ ի մի տէր Յի-  
սուս Քրիստոս. յիր-  
դին Աստուծոյ՝ ծըն-  
եալն յԱստուծոյ՝ Զօրէ  
միածին, այսինքն յէ-  
ութենէ Զօր:

Աստուած՝ յԱստու-  
ծոյ, լոյս՝ ի լուսոյ.  
Աստուած ճշմարիտ  
յԱստուծոյ ճշմարտէ՝  
Ճնունդ և ոչ արարած։

Հաւատամենք որ՝ կաէ  
մի Աստուած, որ նա ա-  
մենակալ Հայր է, երկնքի  
ու երկրի, երեելիների  
ու աներեսութերի ասեղ-  
ծողն է,

Հաւատամ ենք որ  
Յիսուս Քրիստոսը մեր  
միակ տէրն է, որ նա  
Հայր Աստուծու միածին  
որդին է, այսինքն նրա  
էտթիւնիցն է:

Հաւատամենք որ նա  
Աստուած է՝ Աստծուց,  
Լոյս է՝ Լուսոյց, Ճշմարիտ  
Աստուած է, ճշմարիտ  
Աստծուց Ճնած և ոչ թէ  
ասեղծուած։ Հաւատամ

Նոյն ինքն ի բնութէ-  
նէ Հօր, որով ամե-  
նայն ինչ եղել յերկինս  
և ի վերայ երկը՝ երե-  
ւելիք և աներեցիթք:

Որ յաղազս մեր  
մարդկան և վասն մե-  
րոյ փրկութեան իշեալ  
ի յերկնից՝ մարմա-  
ցաւ, մարդացաւ. ծը-  
նաւ կաաարելապէս  
ի Մարիամայ Սրբոյ  
կուսէն Հոգւովին Սր-  
բով: Որով էաւ զմար-  
մին, զոգի և զմիտս և  
զամենայն որ ինչ է  
ի մարդ՝ ճշմարտապէս  
և ոչ կարծեօք:

Չարչարեալ, խա-  
շեալ, թաղեալ, յեր-  
բորդ աւուր յարու-  
ցեալ. ելեալ ի յեր-  
կինս նովին մարմառ  
նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց էնովին մար-  
մընով և փառօք Հօր  
ի զատել զկենզանիս  
և զմենեալս, որոյ թա-  
գաւորութեան ոչ զոյ

ենք, որ Նա նոյն Հայր  
Աստծու բնութիւնիցն է,  
որով ամեն բան եղաւ  
երկնքում և երկրիս վը-  
րան՝ թէ երևելները և  
թէ աներեւոթները:

Հաւատում ենք, որ  
մարդկանց փրկութեան  
համար իջաւ երկնքից.  
մարմին սուաւ. մարդ  
դարձաւ և ծնաւ կատա-  
րեալ կերպով, սուրբ  
Հոգւով Սուրբ Կոստա-  
րիամից: Հաւատում ենք,  
որ սուրբ Հոգւով առաւ  
մարմին, հոգի, միտք և  
այն ամենն՝ ինչ որ կատ  
մարդու մէջ՝ ճշմարիս  
կերպով և ոչ թէ կար-  
ծեօք:

Հաւատում ենք, որ Նա  
չարչարուեց, խաշուեց,  
թաղուեց, երբորդ օրը  
լարութիւն սուաւ. նոյն  
մարմառով երկինք համ-  
բարձաւ ու նստաւ Հօր  
աջ կոպէս:

Հաւատում ենք, որ Նա  
պէտք է զատ նոյն մար-  
մնով և Հօր փառքով  
կենդանիներին ու մե-  
ռածներին զատելու և  
որի թագաւորութիւնը  
անվերջ կլինի.

Հաւատամք և ի սուրբ  
Հոգին՝ յանեղն և ի կա-  
տարեալն, որ խօսե-  
ցաւ յօրէնս և ի մար-  
դարէս և յաւետա-  
րանս: Որ էջն ի Յոր-  
դանան, քարոզեաց  
գառաքեալն և բնա-  
կեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի մի-  
միայն բնդհանրական  
և առաքելական սուրբ  
եկեղեցի—ի մի մկրր-  
տութիւնն, յապաշխա-  
րութիւնն, ի քաւու-  
թիւն և ի թողութիւնն  
մեղաց. ի յարութիւնն  
մեռելոց ի զատաս-  
տանն յաւիտենից՝  
հոգւոց և մարմնոց  
յարքայութիւնն երկ-  
նից և ի կեանսն յա-  
ւիտենականս:

Հաւատամք ենք նաև  
Սուրբ Հոգուն, որ նա ոչ  
ոքից չէ առեղծուել, կա-  
տարեալ Աստուած է, որ  
խօսեց օրէնքի, մարդա-  
րէների և առետարարանե-  
րի միջոցավ, որ Յորդա-  
նան գետն իջաւ. քարո-  
զեց Աստուածոց ուզար-  
կուած Քրիստոսի մասին  
և բնակուեց որբերի մէջ:

Հաւատամք ենք ենք  
մի բնդհանրական և ա-  
ռաքելական եկեղեցու.  
մի մկրտութեան, առաշ-  
խարութեան, մեղաց քա-  
ւութեան, մոռելների լա-  
րութեան, հոգիների և  
մարմինների վերջին զա-  
տաստան մինելուն, եր-  
կրնքի արքայութեանը  
և յաւիտենական կեան-  
քին:

—  
Իսկ որբ ասեն էր  
երբեմն յորժամ ոչ էր  
Որդի, կամ էր երբեմն

Խակ նրանք, որոնք  
ասում են՝ թէ կար ժա-  
մանակ, երբ ոչ Աստծու

յորժամ ոչ էր սուրբ  
Հոգի կամ թէ յոշէիցն  
եղեն, կամ յայլմէ էու-  
թենէ ասեն լինել զոր-  
դին Աստուծոյ և կամ  
զսուրբ Հոգին և թէ  
փոփոխելիք են կամ  
այլայելիք զայնպի-  
սիսն նզովէ կաթողի-  
կէ և առաքելական  
սուրբ եկեղեցի:

Մոգին կամ և ոչ սուրբ  
Հոգին. կամ ասում են,  
թէ Աստծու որդին կամ  
ո. Հոգին ոչնչից դուա-  
ցած և հօր Աստծու էու-  
թիւնից չեն, ալ ուրիշ  
էութիւնից են եղած,  
կամ թէ կարող են փո-  
փոխութիւն և ալլազել Աս-  
պիտի հերետիկական  
խօսքեր ասողներին նզո-  
վում է Կաթողիկէ և Ա-  
ռաքելական սուրբ եկե-  
ղեցին.

Իսկ մեք փառաւո-  
րեսցուք որ յառաջ  
քան զյաւիտեանս, եր-  
կիրապատանելով սրբոյ  
Երրորդութեան և միոյ  
աստուածութեան Հօր  
և Որդոյ և Հոգւոյն  
սրբոյ, այժմ և միշտ  
յաւիտեանս յաւիտե-  
նից ամէն:

Իսկ մենք փառաւո-  
րում ենք յաւիտենից ա-  
ռաջ եղաղին՝ երկրագագե-  
տով սուրբ Երրորդու-  
թեան և մի Աստուածու-  
թեան—Հօրը, Որդուն,  
Սուրբ Հոգուն՝ այժմ,  
միշտ և յաւիտեանս յա-  
ւիտենից. ամէն:

ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ

Մարմին տէրոնական եւ արին փրկ-  
չական կայ առաջի. երկնային զօրութիմքն  
յաներեւոյթս երգեն եւ ասեն անհանգիստ  
բարբառով—Սուրբ, Սուրբ, Սուրբ տէր զօ-  
րութեանց:

Տէրոնական մարմինը և փրկչական արիւնը  
առաջներս դրած է, երկնալին զօրքերն (Երեշտակ-  
ները), աներեւոյթ կերպով երգում են և ասում շա-  
րունակ—Սուրբ, Սուրբ, Սուրբ, Տէր զօրութեանց:

Քրիստոս ի մէջ մեր յայտնեցաւ.  
Որ Ենն Աստուած առա բազմեցաւ,  
Խաղաղութեան ծայն հնչեցաւ,  
Սուրբ ողջունի հրաման տուաւ,  
Եկեղեցին մի անձն եղեւ,  
Համբոյքս յօդ լրման տուաւ:  
Թշնամիութիւնն հեռացաւ.  
Սէր յընդհանուրս սփոնցաւ:  
Ազդ պաշտօնեայք բարձեալ զժայն՝  
Տուք օրնութիւն ի մի բերան,  
Միանական աստուածութեան,  
Որում սրովրէք են սրբարան:

Քրիստոս մեր մէջ բարոնուեց, Որ էն Աստուածն ապահով (անզանի վրա) բազմեց. Խաղաղութեան ձախն լուսեց, սուրբ ողջանի հրաման տրուեց. Նկեղեցիս (բոլոր քրիստոնեաների ժագավը) մի օիբա—մի հոգի դարձաւ. և այս ողջունի համբուլը միութեան կապ եղաւ. Թշնամութիւնը հեռացաւ. Քրիստոսի ուշըն ամենիս մէջ տարածուեց. Ուրիմն, ով պաշտօնեաներ, ձաներդ դարձրացնելով՝ միաբերան օրհնութիւն տուէք միասնական Աստուածութեանը, որին Արայիները փառաբանուեմ են:

---

Գոհանամք զքէն Տէր, որ կերակրեցեր զմնզ յանմահական սեղանոյ քոյ՝ բաշխելով զմարմին եւ զարին ի փրկութիւն աշխարհի եւ կեանք անձանց մերոց:

---

Ենորհակալ Էնք քեզնից, ով Տէր, որ մեզ կերակրեցիր քո անմահական սեղանից, բաշխելով քո մարմինն ու արիւնը՝ աշխարհի փրկութեան և մեր անձին կեանք լինելու համար:

---

Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, ի են երկինք եւ երկիր փառօք քո. Օրհնութիւն ի բարձունս, օրհնեալ որ եկիր եւ զա-

լոցի ես անուամբ տեառն: Ո՞վսաննա ի բարձունս:

---

Սուրբ, Սուրբ, Սուրբ Տէր զօրութեանց, երկինքն ու երկիրը լի են քո փառքերով: Օրհնութիւն լինի բարձրումը. օրհնեալ ես որ եկար և պիտի զառ Տիրոջ անունով: Ո՞վսաննա բարձրումը:

БИБЛИОТЕКА  
ИССЛЕДОВАНИЯ  
Академии Наук  
СССР

## Ց Ա Կ Կ

Ա. Վազգարսովի լարութիւնը . . . . .	5
Բ. Տասն կոլմեր . . . . .	8
Գ. Յիսուսի մատնութիւնը . . . . .	11
Դ. Յիսուսի համբարձումը . . . . .	12
Ե. Հոգեգալուստ . . . . .	13
Զ. Վերափոխումն . . . . .	16
Է. Արդար թագաւորը զեսպաներ է ուզար- կում Յիսուսի մօտ . . . . .	19
Ը. Ա. Թաղէսու և Բարդուզիմէսու . . . . .	21
Թ. Ա. Գրիգոր (Կամ երկրորդ) Լուսաւորիչ .	24
Ժ. Հոփիսիմեան և Գալիանեան կոլմերը փախում են Հայաստան . . . . .	30
Ճ.Ա. Ա. Գրիգորին գուրս են բերում Վերապից .	32
Ճ.Բ. Ա. Գրիգոր Լուսաւորչի երազը . . . . .	37
Ճ.Գ. Եջմիածնի տաճարի շինութիւնը . . . . .	38
Ճ.Դ. Հաւատոյ հանդանակ . . . . .	41
Ճ.Ե. Պատարագի երգեր . . . . .	45



408

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄՔ ԼՈՅԱ ԵՎ ՏԵԱԾ, ԿՐՈՆՔ  
ՀԵՏԵՒԵԼ ԳՈՎՈՎՐԵՐԸ

1

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՅԱՍԱՐ  
ԱՏԱԼՈՒՄ ԽԱ  
Ս.Ս.Հ.Բ.

	Գ.
1. ԳԱՍՏՐԻՒԹԻ ԿՐՈՆԻ ՀԲՆ-ՌԵԼՄ ՀԱՄԱՐ Ա. . . . .	1 75
2. ԳԱՍՏՐԻՒԹԻ ԿՐՈՆԻ ՄՈՐ-ՌԵԼՄ " Բ. . . . .	2 5
3. ՄԻ ՔԱՆԻ ԽՋԱՑԻ ՀԱՅ ԿՐՕՆԱԿԱՐԺՆԵՐԻՆ. . . . .	— 10
<b>ՄԻԶԻՆ ՏՐՉԱՆ</b>	
4. ԱԽՍՈՒՑՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻ, ԿՐՈՆԻ ՀԱՄ. Գ. . . . .	1 50
5. ՈԽՍՈՒՑՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԻ, ԿՐՈՆԻ " Ե. . . . .	— 50
6. ՏՈ.ԱՆ ՊԱՏՇՈՒԹՎԱՆ . . . . .	— 50

11

ԱՅԱԿԵՐՏՆԵՐԻ ՑԱՐՈՒԹ

7.	ԴԱՄԱՏԵՏԾՐ ԿՐՈՒ. . . . .	Ա.	տարի	—	20
8.	ԴԱՄԱՏԵՏԾՐ . . . . .	Բ.	»	—	20
9.	ԴԱՄԱՏԵՏԾՐ . . . . .	Գ.	»	—	30
10.	ՄՐՑԱԶ. ՊԱՏՄ. ՀԿՆ.ու խափ 1, (բնդաբանակ)	Դ.	»	—	45
11.	ՄՐՑԱԶ. ՊԱՏՄ. ՀԿՆ ախտի 2, (համառ օտ)	Ե.	»	—	30
12.	ՄՐՑԱԶ. ՊԱՏՄ. Նոր ուժամբի.				
	1. Ամեաբան՝ . . . . .				— 40
13.	2. Գարծք առաքելոց . . . . .	{	Ա.	»	— 40

Եմ զասազիերն ստանալ յանկացողները կարող են դիմել -

1. Тифлисъ: Священнику С. Саакашвили.
  2. Центральная книжная торговля.  
Цена 75 рублей в рубль 20% купюры 45 рублей.

Դիմում է 20 կտր.

0026816

四

·2013

## «Ազային գոադարան»



NL 0026816

